Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի հիմնական դպրոց

Տնօրեն՝ Ն.Տողանյան

# Թեմատիկ պլանավորում

## «Աշխարհագրություն»

6-8-րդ դասարաններ

2023-2024 Ուստարի

Ուսուցիչ՝ Աննա Անդրյան

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ 6

„ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹ:ՄԱՅՐՑԱՄԱՔՆԵՐ ԵՎ ՕՎԿԻԱՆՈՄՆԵՐ"

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

(Շաբաթական 2 ժամ, տարեկան 68 ժամ)

| h/h | ԹԵՄԱ , ԴԱՍ | ԺԱՄԱ ՔԱՆԱԿ | ՏՆԱՅԻՆ ՀԱՆՁ. | ՉԱՓՈՐՈՇՉԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ |
|---|---|---|---|---|
| 1. | ***ԹԵՄԱ 1.ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՆԹ***<br>ԴԱՍ 1 Աշխարհագրական թաղանթ.<br>ԴԱՍ 1 Կառուցվածքը, հատկանիշները<br>ԴԱՍ 2.Աշխարհագրական թաղանթի զարգացումը :<br>ԴԱՍ 2.2 Երկրագնդի խոշոր պլատֆորմները<br>ԴԱՍ 3. Օդային զանգվածներ<br>ԴԱՍ 3. Կլիմայական գոտիներ<br>**Գործնական աշխատանք-1**<br>ԴԱՍ 4. Հորիզոնական զոնայականություն<br>ԴԱՍ 4. Վերընթաց գոտիականություն<br>ԴԱՍ 5.Բնական զոնաներ , դրանց աշխարհագրական տարածումը<br>ԴԱՍ 5.Բնական զոնաներ , դրանց աշխարհագրական տարածումը<br>ԹԵՄԱՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ | 12 | էջ 5-8<br>էջ 9-12<br>էջ 12-13<br>էջ 16-20<br>էջ 21-24<br>էջ24-25<br>էջ26-28<br>էջ28-31 | **Նպատակ-** Գաղափար կազմի աշխարհագրական թաղանթի, նրա ոլորտային կառուցվածքի մասին, ծանոթանա աշխարհագրական թաղանթի զարգացման դարաշրջաններին, գաղափար կազմի օդային զանգվածների, կլիմայական գոտիների և Երկրի բնական զոնաների մասին, հասկանա վերընթաց գոտիականության երևույթը:<br>**Վերջնարդյունքներ**-Իմանաաշխարհագրականթաղանթի ոլորտները, նրա զարգացման դարաշրջանները և դրանցում ընթացող առավել կարևոր իրադարձությունները, Երկրի տարիքը:<br>կարողանա թվարկել, քարտեզի վրա ցույց տալ և մակագրել կլիմայական գոտիներ /ցանկացած 4-5/, բնական զոնաներ /առնվազն 3/, օդային զանգվածները, իմանա բնական զոնաների տարբերության պատճառները |
| 2. | ***ԹԵՄԱ 2.*** Մայրցամաքներ և օվկիանոսներ<br>ԴԱՍ 6.Ինչ է ուսումնասիրում մայրցամաքների և օվկիանոսների աշխարհագրությունը: | 1 | էջ 32-34 | **Նպատակ-**Իմանա մայրցամաքներն ու օվկիանոսները, գաղափար կազմի աշխարհամասերի մասին, իմանա այն մայրցամաքը, որում գտնվում է ինքը<br>**Վերջնարդյունքներ-** Կարողանա թվարկել և քարտեզի վրա ցույց տալ մայրցամաքները, օվկիանոսները, գտնել մեր երկրի տեղը աշխարհի քարտեզում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 3. | *ԹԵՄԱ 3.ԱՖՐԻԿԱ*<br>ԴԱՍ 7.Աֆրիկայի աշխարհազարական դիրքը,ափագիծը:<br>ԴԱՍ 7.1Աֆրիկայի ռելիեֆը<br>ԴԱՍ 8.Աֆրիկայի կլիման<br>ԴԱՍ 8. 1 Աֆրիկայի ներքին ջրերը<br>**Գործնական աշխատանք 2**<br>ԴԱՍ 9 Աֆրիային բնական զոնաները:<br>ԴԱՍ 9 Սավաննաների բնական զոնայի բնութագիրը<br>ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ | 8 | էջ 35-40<br>էջ 40-47<br>էջ 47-52<br>էջ44-46<br>էջ47-49<br>էջ49-52 | **Նպատակ-** Ծանոթացնել մակերևույթի հիմնական ձևերին,աշխարհագրական դիրքին՝ ըստ օվկիանոսների, գաղափար կազմի մայցամաքի չափերի մասին:Գաղափար կազմի Աֆրիկայի կլիմայական գոտիների մասին և ծանոթանա Աֆրիկայի խոշոր գետերին ու լճերին:Ծանոթացնել Աֆրիկայում տարածված բնական զոնաներին:Գաղափար կազմի Աֆրիկայում տարածված կենդանական աշխարհի մասին:<br>**Վերջնարդյունքներ** Իմանա Աֆրիկայի ամենաբարձր լեռը /Կիլիմանջարո/:Իմանա Աֆրիկայի ափերը ողողող օվկիանոսները և ամենամեծ կղզին /Մադագասկար/: Թվարկել մեկ կամ երկու կլիմայական գոտիներ և բնական զոնաներ, Աֆրիկայում տարածված երկու անապատ :<br>Ներկայացնել Աֆրիկայում տարածված մի քանի կենդանու և բույսի տեսակներ: |
| 4. | *ԹԵՄԱ 4.ԱՎՍՏՐԱԼԻԱ* | | | |
| 5. | ԴԱՍ 10.Ավստրալիա ընդհանուր բնութագիրը<br>ԴԱՍ 10. Ավստրալիայի մակերևույթը<br>Ավստրալիայի կլիման<br>Ավստրալիայի ներքին ջրերը<br>Դաս11 Ավստրալիայի բուսական և կենդանական աշխարհի յուրահատկությունները:<br>ԹԵՄԱՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ<br>**Աշխատանք ուրվագծային քարտեզով** | 7 | էջ 53-54<br>էջ 54-55<br>էջ55-57<br>էջ57-58<br>էջ59-61 | **Նպատակ-** Պատկերացում կազմի, որ Ավստրալիան աշխարհի ամենափոքր, ամենաչոր մայրցամաքն է, ծանոթանա ափերը ողողող օվկիանոսներին և իմանա մայրցամաքի ամենաբարձր գագաթը:<br>Գաղափար կազմի «էնդեմիկ» հասկացության մասին, ծանոթանա Ավստրալիայում տարածված էնդեմիկ բույսերի և կենդանիների տեսակներին:<br>**Վերջնարդյունքներ-** Կարողանա քարտեզի վրա ցույց տալ Ավստրալիա մայրցամաքը, Ավստրալական Միությունը, ափերը ողողող օվկիանոսները, ամենաբարձր լեռնագագաթը և դրանք կարողանա մակագրել ուրվագծային քարտեզի վրա՝ օգտվելով համապատասխան քարտեզներից և ատլասներից:<br>Կարողանա բացատրել «էնդեմիկ» հասկացությունը, թվարկել մի քանի էնդեմիկ բույսեր և կենդանիներ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 6. | *ԹԵՄԱ 5. ԱՆՏԱՐԿՏԻԴԱ* | 5 | | |
| 7. | ԴԱՍ 12.Անտարկտիդայի ընդհանուր բնութագրը<br>Անտարկտիդայի կլիման<br>Անտարկտիդայի բուսական և կենդանական աշխարհը<br><br>ԴԱՍ13 Հարցեր առաջադրանքներ `<<Աֆրիկա>,<<Ավստրալի>>, << Անտարկտիդայի > ԹԵՄԱՆԵՐԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ<br>ԴԱՍ13 Հարցեր առաջադրանքներ `<<Աֆրիկա>,<<Ավստրալի>>, << Անտարկտիդայի > ԹԵՄԱՆԵՐԻ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ | | էջ 63-65<br>էջ65-66<br>էջ66-68<br><br>էջ69-70<br>էջ69-70 | • **Նպատակը-** Ծանոթանա Անտարկտիդայի աշխարհագրական դիրքին՝ ըստ օվկիանոսների, կլիմայի առանձնահատկությանը:Գաղափար կազմի Անտարկտիդայի ամենաբարձր լեռան և կենդանական աշխարհի էնդեմիկ տեսակների վերաբերյալ:<br>• **Վերջնարդյունքներ-** Օգտվելով քարտեզներից ներկայացնել Անտարկտիդայի ափերը ողողող օվկիանոսները:<br>• Համառոտ բնութագրել Անտարկտիդայի կլիման ու օրգանական աշխարհը |
| 8. | *ԹԵՄԱ 6. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ* | 8 | | |
| 9. | ԴԱՍ 14.Հարավային Ամերիայի աշխարհագարական դիրքը, ափագիծը<br>ԴԱՍ 14.2Հարավային Ամերիայի մակերևույթը<br>ԴԱՍ 15.Հարավային Ամերիկայի կլիման<br>ԴԱՍ 15.1Ներքին ջրերը<br>ԴԱՍ 16.Հարավային Ամերիկայի բնական զոնաները:<br>ԴԱՍ 16.1Վերընթաց գոտիականությունն Անդերում<br><<Զարմանահրաշ մոլորակ>><br>Հավաքել լրացուցիչ տեղեկություններ նախընտրած կենդանու մասին | | էջ71-72<br>էջ72-75<br><br>էջ76-79<br><br>էջ79-81<br>էջ83-86<br><br>էջ86-87 | Նպատակը- Գաղափար կազմի մայրցամաքի աշխարհագրական դիրքի, ափերը ողողող օվկիանոսների մասին:Ծանոթ լինի կարևոր աշխարհագրական օբյեկտների՝ամենաբարձր լեռնագագաթի, ամենամեծ հարթավայրի, ամենաջրառատ գետի, ամենաբարձրադիր քաղցրահամ լճի, ամենաբարձր ջրվեժի, ամենաչոր անապատի անուններին և գտնվելու վայրերին: Գաղափար կազմի առավել մեծ տարածում ունեցող բնական զոնաների և մայրցամաքում տարածված մի քանի բույսերի և կենդանիների մասին:<br><br>**Վերջնարդյունքներ-** Իմանա մայրցամաքի աշխարհագրական դիրքի կարևոր առանձնահատկությունները, ափերը ողողող |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | *ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ* | | | օվկիանոսները: Կարողանա թվարկել կարևոր աշխարհագրական օբյեկտների և մայրցամաքում տարածված մի քանի բույսերի ու կենդանիների անուններ: Կարողանա քարտեզի վրա ցույց տալ և ուրվագծային քարտեզի վրա |
| 10. | *ԹԵՄԱ 7.ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱ*<br>ԴԱՍ17.Հյուսիսային Ամերիկայի աշխարհագրական դիրքը, ափագիծը<br>ԴԱՍ 17.1Հյուսիսային Ամերիկայի մակերևույթը<br>ԴԱՍ 18.Հյուսիսային Ամերիկայի կլիման<br>ԴԱՍ 18 Հյուսիսային Ամերիկայի ներքին ջրերը<br>ԴԱՍ 19.Հյուսիսային Ամերիկայի բնական զոնաները:<br>Դաս20 Հարցեր և առաջադրանքներ `<<Հյուսիսային Ամերիկա>> << Հարավային Ամերիկա > և թեմաների կրկնության և ամփոփման համար<br><br>Աշխատանք ուրվագծային քարտեզի հետ<br><br>*Թեմատիկ գրավոր աշխատանք* | 7 | Էջ89-90<br>Էջ91-94<br>Էջ95-99<br>Էջ99-101<br>Էջ102-106<br>Էջ106-107 | **Նպատակը**- Ծանոթացնել մայրցամաքի աշխարհագրական դիրքին, ափերը ողողող օվկիանոսներին, ափերի մոտ գտնվող ամենամեծ կղզուն ,մակերևույթի խոշոր ձևերին: Գաղափար կազմի Հյուսիսային Ամերիկայի կլիմայական գոտիների մասին:<br>Ծանոթացնել Հյուսիսային Ամերիկայում տարածված մի քանի գետերի և լճերի<br>**Վերջնարդյունքներ**-Իմանա մայրցամաքի ափերը ողողող օվկիանոսները, նրա ափերի մոտ գտնվող ամենամեծ կղզին: Իմանա նրա ամենաբարձր լեռը և ամենացածր կետը:Համառոտ բնութագրի մեկ կլիմայական գոտի, ներկայացնի տոռնադո քամին: Իմանա երկու գետի և լճի անունն և տեղը քարտեզի վրա,Նիագարա ջրվեժը և տեղը քարտեզի վրա:Բնութագրել մեկ բնական զոնա, իմանալ այնտեղ ապրող և աճող մի քանի բույսի և կենդանու անունն: Իմանա Հյուսիսային Ամերիկայում տարածված բնական զոնաները: : |
| 11. | *ԹԵՄԱ 8 .ԵՎՐԱՍԻԱ* | 13 | | |
| 12. | ԴԱՍ 21.Եվրասիայի աշխարհագրական դիրքը<br>ԴԱՍ 2.1Եվրասիայի ափագիծը ,ափերը ողողող ծովերը | | Էջ108<br>Էջ108-113<br>Էջ114-115 | Նպատակը- Ծանոթացնել մայրցամաքի բնությանը և ցույց տալ աշխարհագրական դիրքի բնական օբյեկտների և երևույթների տեղաբաշխման տարածական առանձնահատկությունները |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ԴԱՍ 22.Եվրասիայի երկրաբանական կառուցվածքը:<br>ԴԱՍ 22.Եվրասիայի մակերևույթը<br>Խոշոր հարթավայրերը<br><br>**ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 4**<br>ԴԱՍ 24.Եվրասիայի կլիման<br>ԴԱՍ 25.Եվրասիայի կլիմայական գոտիները և մարզերը<br>ԴԱՍ 26.Եվրասիայի ներքին ջրերը<br>ԴԱՍ 26. Եվրասիայի լճերը<br>Աշխատանք ուրվագծային քարտեզի հետ<br>ԴԱՍ 27.Եվրասիայի բնական զոնաները. դրանց հերթափոխությունը :<br>ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ<br>ԹԵՄԱՏԻԿ ԳՐԱՎՈՐ ԱՇԽԱՏԱՆՔ | | էջ115-116<br><br>էջ123-128<br>էջ129-135<br><br>էջ136-139 | **Վերջնարդյունքներ**- Բնութագրել մայրցամաքը, թվարկել մակերևույթի հիմնական ձևերը, գետերն ու լճերը:<br><br>Բնութագրել կլիմայական գոտիները և բնական զոնաները: |
| 13. | *ԹԵՄԱ 9.ՕՎԿԻԱՆՈՍՆԵՐ* | | | |
| 14. | ԴԱՍ 28Խաղաղ օվկիանոսի բնութագիրը<br>ԴԱՍ 28. Հյուսիսային Սառուցյալ օվկիանոսի բնութագիրը<br>ԴԱՍ 29.Ատլանտյան օվկիանոնսների բնութագիրը<br>ԴԱՍ 29.1Հնդկական օվկիանոսների բնութագիրը<br>Ընդհանուր կրկնություն | 4 | էջ 140-143<br><br>էջ 143-147 | • **Նպատակը**- Ծանոթացնել օվկիանոսների բնաշխարհին և ցույց տալ աշխարհագրական դիրքի ազդեցությունն օվկանոսներում տեղի ունեցող ֆիզիկաաշխարհագրական գործընթացների վրա, ծանոթացնել ջրաբանական ռեժիմին, օրգանական աշխարհին:<br>**Վերջնարդյունքներ**- Օգտվելով թեմատիկ քարտեզներից՝Բնութագրել օվկիանոսները, համեմատել ջրի ջերմային և ֆիզիկական հատկանիշները յուրաքանչյուր օվկիանոսի համար:<br><br>Ներկայացնել օվկիանոսների դերն ու նշանակությունը մարդու կյանքում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 15. | ԴԱՍ 30.ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՄՓՈՓԻՉ ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ | 1 | | |